

ԽՈՐՀՐԴԻ 1992 թվականի հունիսի 24–ի 92/57/ԵՏՀ ՀՐԱՀԱՆԳ

**Ժամանակավոր կամ շարժական շինարարական հարթակներում աշխատողների
անվտանգության և առողջության ապահովման նվազագույն պահանջների
իրականացման մասին (89/391/ԵՏՀ հրահանգի 16(1) հոդվածի իմաստով ութերորդ
անհատական հրահանգ)**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին»
պայմանագիրը, և, մասնավորապես, դրա 118ա հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1), որը ներկայացվել է
Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և առողջության պահպանման հարցերով
խորհրդատվական կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո,

համագործակցելով Եվրոպական պառլամենտի հետ (2),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (3),

քանի որ Պայմանագրի 118ա հոդվածով նախատեսվում է, որ Խորհուրդը հրահանգների
միջոցով պետք է ընդունի հատկապես աշխատանքային միջավայրի բարելավման
խթանմանն ուղղված նվազագույն պահանջները՝ աշխատողների անվտանգության և
առողջության պահպանման առավել բարձր մակարդակ ապահովելու նպատակով,

քանի որ այդ հոդվածի պահանջների համաձայն՝ նման հրահանգներով չպետք է
սահմանվեն այնպիսի վարչական, ֆինանսական և իրավական սահմանափակումներ,
որոնք հետ կպահեն փոքր և միջին ձեռնարկություններն ստեղծելուց ու զարգացնելուց,

քանի որ Հանձնաժողովի՝ աշխատավայրում անվտանգությանը, հիգիենային և
առողջությանը վերաբերող ծրագրերի մասին հաղորդագրությամբ (4) նախատեսվում է
այնպիսի հրահանգի ընդունում, որն ուղղված է ժամանակավոր կամ շարժական
շինարարական հարթակներում երաշխավորելու աշխատողների անվտանգությունն ու
առողջությունը,

քանի որ Խորհուրդը 1987 թվականի դեկտեմբերի 21–ի «Աշխատավայրում
անվտանգության, հիգիենայի և առողջության մասին» որոշմամբ (5) հաշվի է առել

Հանձնաժողովի՝ մոտ ապագայում ժամանակավոր կամ շարժական շինարարական հարթակներին վերաբերող նվազագույն պահանջները Խորհուրդ ներկայացնելու միտումը, քանի որ ժամանակավոր կամ շարժական շինարարական հարթակները համարվում են աշխատանքային այնպիսի տարածք, որտեղ աշխատողները ենթակա են առավել բարձր ռիսկի,

քանի որ Համայնքում շինարարական հարթակներում դժբախտ պատահարների կեսից ավելին տեղի են ունեցել ծրագրի նախապատրաստական փուլում ճարտարապետական և (կամ) կազմակերպչական անհաջող տարբերակների կամ աշխատանքների վատ պլանավորման պատճառով,

քանի որ յուրաքանչյուր անդամ պետության՝ աշխատավայրում անվտանգության և առողջության ապահովման համար պատասխանատու մարմինները պետք է, նախքան աշխատանքների մեկնարկը, տեղեկացվեն այն աշխատանքների իրականացման մասին, որոնց ծավալը գերազանցում է որոշ սահմանը,

քանի որ ծրագրի իրականացման ժամանակ շինարարական հարթակներում մեծ թվով դժբախտ պատահարները տեղի են ունենում ոչ պատշաճ համակարգման պատճառով, մասնավորապես, երբ ժամանակավոր կամ շարժական նույն շինարարական հարթակում միաժամանակ կամ հաջորդաբար աշխատում են տարբեր ընկերություններ,

քանի որ, համապատասխանաբար, անհրաժեշտ է ծրագրի նախապատրաստական, ինչպես նաև իրականացման փուլում բարելավել շահագրգիռ տարբեր կողմերի միջև աշխատանքների համակարգումը,

քանի որ ժամանակավոր կամ շարժական շինարարական հարթակներում աշխատողների անվտանգության և առողջության ապահովման առավել բարձր չափանիշներ երաշխավորելու համար նախատեսված նվազագույն պահանջների հետ համապատասխանությունը էական նշանակություն ունի աշխատողների անվտանգությունն ու առողջությունն ապահովելու հարցում,

քանի որ, ավելին, ինքնազբաղ անձինք և գործատուները աշխատանքային գործունեությանը անձամբ ներգրավվելու դեպքում կարող են ժամանակավոր կամ շարժական շինարարական հարթակում իրականացվող աշխատանքներով վտանգել աշխատողների առողջությունն ու անվտանգությունը,

քանի որ, համապատասխանաբար, անհրաժեշտ է, «Աշխատավայրում աշխատողների կողմից սարքավորումների օգտագործման համար անվտանգության և առողջության ապահովման նվազագույն պահանջների մասին» Խորհրդի 1989 թվականի նոյեմբերի 30–ի 89/655/ԵՏՀ հրահանգի (երկրորդ անհատական հրահանգ) (6) և «Աշխատավայրում աշխատողների կողմից անձնական պաշտպանական միջոցների օգտագործման համար առողջության ու անվտանգության ապահովման նվազագույն պահանջների մասին» Խորհրդի 1989 թվականի նոյեմբերի 30–ի 89/656/ԵՏՀ հրահանգի (երրորդ անհատական հրահանգ) (7) որոշ համապատասխան դրույթներ տարածել այն ինքնազբաղ անձանց և գործատուների վրա, որոնք շինարարական հարթակներում անձամբ ներգրավված են աշխատանքային գործունեության մեջ,

քանի որ սույն Հրահանգը «Աշխատավայրում աշխատողների անվտանգության և առողջության բարելավումը խթանելուն ուղղված միջոցառումների ներդրման մասին» Խորհրդի 1989 թվականի հունիսի 12–ի 89/391/ԵՏՀ հրահանգի 16 (1) հոդվածի իմաստով անհատական հրահանգ է (8), և քանի որ նշված հրահանգի դրույթները, հետևաբար, ամբողջությամբ կիրառվում են ժամանակավոր կամ շարժական շինարարական հարթակների նկատմամբ՝ չհակասելով սույն Հրահանգի առավել խիստ և (կամ) հատուկ դրույթներին,

քանի որ սույն Հրահանգի ընդունումը գործնական քայլ է՝ ուղղված ներքին շուկայի սոցիալական ուղղվածությանը հասնելուն՝ հատուկ հղում կատարելով «Շինարարական արտադրանքին վերաբերող անդամ պետությունների օրենքների, կանոնակարգերի և վարչական ակտերի մոտարկման մասին» Խորհրդի 1988 թվականի դեկտեմբերի 21–ի 89/106/ԵՏՀ հրահանգի կարգավորման առարկային (9), ինչպես նաև «Հանրային աշխատանքների վերաբերյալ պայմանագրերի կնքման ընթացակարգերի համակարգման մասին» 71/305/ԵՏՀ հրահանգը փոփոխող՝ Խորհրդի 1989 թվականի հուլիսի 18–ի 89/440/ԵՏՀ հրահանգի կարգավորման առարկային (10),

քանի որ Խորհրդի 74/325/ԵՏՀ որոշման համաձայն (11)՝ Հանձնաժողովը խորհրդակցում է Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և առողջության պահպանման հարցերով խորհրդատվական կոմիտեի հետ՝ այս ոլորտի համար առաջարկություններ կազմելու նպատակով,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

Կարգավորման առարկան

1. Սույն հրահանգով, որը թիվ 89/391/ԵՏՀ հրահանգի 16(1) հոդվածի իմաստով ութերորդ անհատական հրահանգն է, սահմանվում են 2 (ա) հոդվածով սահմանված՝ ժամանակավոր կամ շարժական շինարարական հարթակներում անվտանգությանը և առողջությանը ներկայացվող նվազագույն պահանջները:
2. Սույն Հրահանգը չի տարածվում «Հանքավայրերում անվտանգության և առողջության հարցերով հանձնաժողովի պարտականությունները հանքարդյունահանման արդյունաբերության բոլոր ճյուղերի վրա տարածելու մասին» Խորհրդի 1974 թվականի հունիսի 27-ի 74/326/ԵՏՀ որոշման 1(2) հոդվածի իմաստով արդյունահանող արդյունաբերության ճյուղերում հորատման և արդյունահանման աշխատանքների վրա (12):
3. 89/391/ԵՏՀ հրահանգի դրույթներն ամբողջությամբ կիրառվում են 1-ին պարբերության մեջ նշվածների նկատմամբ՝ չհակասելով սույն Հրահանգի առավել խիստ և (կամ) հատուկ դրույթներին:

Հոդված 2

Սահմանումները

Սույն Հրահանգի նպատակներով՝

- ա) «ժամանակավոր կամ շարժական շինարարական հարթակներ» (այսուհետ՝ «շինարարական հարթակներ») նշանակում է ցանկացած շինարարական հարթակ, որտեղ իրականացվում են շինարարական աշխատանքներ կամ քաղաքացիական կառույցների շինարարություն: Նշված աշխատանքների ոչ սպառիչ ցանկը ներկայացված է I հավելվածում .
- բ) «պատվիրատու» նշանակում է ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, ում համար իրականացվում է ծրագիրը.
- գ) «ծրագրի ընթացքը վերահսկող անձ» նշանակում է ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, ով գործելով պատվիրատուի անունից, պատասխանատու է ծրագրի նախագծման և (կամ) դրա իրականացման և (կամ) իրականացումը վերահսկելու համար,

դ) «ինքնագրադ անձ» նշանակում է 89/391/ԵՏՀ հրահանգի 3 (ա) և (բ) հոդվածում նշված անձանցից բացի ցանկացած այլ անձ, որի մասնագիտական գործունեությունը նպաստում է ծրագրի իրականացմանը.

ե) «ծրագրի նախապատրաստական փուլում անվտանգության ու առողջության ապահովման հարցերով համակարգող» նշանակում է ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, ում պատվիրատուն և (կամ) ծրագրի ընթացքը վերահսկող անձը ծրագրի նախագիծը պատրաստելու ընթացքում վստահել են 5-րդ հոդվածում նշված պարտականությունների կատարումը.

զ) «ծրագրի իրականացման փուլում անվտանգության ու առողջության ապահովման հարցերով համակարգող» նշանակում է ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, ում պատվիրատուն և (կամ) ծրագրի ընթացքը վերահսկող անձը ծրագրի իրականացման ընթացքում վստահել են 6-րդ հոդվածում նշված պարտականությունների կատարումը.

Հոդված 3

Համակարգողների նշանակումը. Անվտանգության ու առողջության ապահովման ծրագիր. Նախնական ծանուցում

1. Պատվիրատուն կամ ծրագրի ընթացքը վերահսկող անձը պետք է շինարարական ցանկացած այն հարթակի համար, որտեղ ներկա են մեկից ավելի շինարարներ, նշանակեն 2 (ե) և (զ) հոդվածով սահմանված՝ անվտանգության ու առողջության ապահովման հարցերով մեկ կամ ավելի համակարգողների:

2. Պատվիրատուն կամ ծրագրի ընթացքը վերահսկող անձը պետք է ապահովի, որ նախքան շինարարական հարթակի տեղադրումը, կազմվի անվտանգության ու առողջության ապահովման ծրագիր՝ 5(բ) հոդվածին համապատասխան:

Անդամ պետությունները կարող են թե՛ շինարարության աշխույժների և թե՛ աշխատողների հետ խորհրդակցելուց հետո թույլ տալ շեղումներ կատարել առաջին պարբերության դրույթներից, բացառությամբ եթե համապատասխան աշխատանքը պարունակում է II հավելվածում թվարկված կոնկրետ դիսկերը:

3. Շինարարական այն հարթակների դեպքում, որտեղ

– նախատեսվում է, որ աշխատանքը կտևի 30 աշխատանքային օրվանից ավելի, և որտեղ միաժամանակ աշխատում է 20 աշխատող կամ

– նախատեսվում է, որ աշխատանքի ծավալը կգերազանցի 500 մարդ/օրը,

պատվիրատուն կամ ծրագրի ընթացքը վերահսկող անձը III հավելվածին համապատասխան կազմված նախնական ծանուցումը պետք է, նախքան աշխատանքների մեկնարկը, փոխանցի իրավասու մարմիններին:

Նախնական ծանուցումը պետք է հստակորեն փակցվի շինարարական հարթակում և, հարկ եղած դեպքում, պարբերաբար թարմացվի:

Հոդված 4

Ծրագրի նախապատրաստական փուլ. ընդհանուր սկզբունքներ

Ծրագրի ընթացքը վերահսկող անձը կամ, հարկ եղած դեպքում, պատվիրատուն, պետք է հաշվի առնի 89/391/ԵՏՀ հրահանգում նշված անվտանգությանը և առողջությանը սպառնացող ռիսկերի կանխման ընդհանուր սկզբունքները՝ ծրագրի նախագծման և նախապատրաստման տարբեր փուլերի ընթացքում, մասնավորապես,

– երբ միաժամանակ կամ հաջորդաբար իրականացվող աշխատանքի տարբեր տեսակները կամ փուլերը պլանավորելու նպատակով որոշվում են ճարտարապետական, տեխնիկական և (կամ) կազմակերպչական հարցեր.

– երբ հաշվարկվում է նշված աշխատանքների ավարտի կամ աշխատանքի փուլերի համար անհրաժեշտ ժամկետը: Աշխատողների առողջության պահպանման ու անվտանգության ապահովման ծրագրերը, ինչպես նաև 5 (բ) կամ (գ) հոդվածին համապատասխան կազմված կամ 6 (գ) հոդվածին համապատասխան փոփոխված գործերը պետք է ամեն անգամ անհրաժեշտության դեպքում հաշվի առնվեն:

Հոդված 5

Ծրագրի նախապատրաստական փուլ. համակարգողների պարտականությունները

Ծրագրի նախապատրաստական փուլի ընթացքում 3 (1) հոդվածին համապատասխան նշանակված՝ անվտանգության ու առողջության ապահովման հարցերով համակարգողը (համակարգողները) պետք է՝

ա) համակարգի (համակարգեն) 4-րդ հոդվածի դրույթների իրականացումը.

բ) կազմի (կազմեն) կամ պահանջի (պահանջեն), որ կազմեն անվտանգության ու առողջության ապահովման ծրագիր, որտեղ պետք է սահմանվեն համապատասխան շինարարական հարթակի նկատմամբ կիրառվող կանոնները՝ հարկ եղած դեպքում հաշվի առնելով հարթակում տեղի ունեցող արտադրական գործունեությունը. սույն ծրագրում պետք է ներառվեն նաև II հավելվածի մեկ կամ ավելի կատեգորիաների ներքո ընկնող աշխատանքներին վերաբերող հատուկ միջոցները.

գ) պատրաստի (պատրաստեն) ծրագրի բնութագրերին համապատասխան գործ, որտեղ կգետեղվեն հետագա ցանկացած աշխատանքների կատարման ընթացքում հաշվի առնվող անվտանգության և առողջության վերաբերյալ համապատասխան տեղեկությունները:

Հոդված 6

Ծրագրի իրականացման փուլ. համակարգողների պարտականությունները

Ծրագրի իրականացման փուլի ընթացքում 3 (1) հոդվածին համապատասխան նշանակված՝ անվտանգության ու առողջության ապահովման հարցերով համակարգողը (համակարգողները) պետք է՝

ա) համակարգի (համակարգեն) ռիսկերի կանխման և անվտանգության ապահովման ընդհանուր սկզբունքների իրականացումը.

– երբ միաժամանակ կամ հաջորդաբար իրականացվող աշխատանքի տարբեր տեսակները կամ փուլերը պլանավորելու նպատակով որոշվում են տեխնիկական և (կամ) կազմակերպչական հարցեր.

– երբ հաշվարկվում է նշված աշխատանքների ավարտի կամ աշխատանքի փուլերի համար անհրաժեշտ ժամկետը.

բ) համակարգի (համակարգեն) համապատասխան դրույթների իրականացումը՝ ապահովելու համար, որ գործատուները և, հարկ եղած դեպքում, աշխատողների, ինքնազբաղ անձանց պաշտպանության համար՝

– համահունչ կերպով կիրառեն 8-րդ հոդվածում նշված սկզբունքները.

– հարկ եղած դեպքում, հետևի (հետևեն) 5 (բ) հոդվածում նշված անվտանգության ու առողջության ապահովման ծրագրին.

գ) կատարի (կատարեն) կամ ստիպի (ստիպեն) կատարել 5 (բ) հոդվածում նշված անվտանգության ու առողջության ապահովման ծրագրում և 5 (գ) հոդվածում նշված գործում անհրաժեշտ ցանկացած փոփոխություն՝ հաշվի առնելու համար աշխատանքի առաջընթացը և կատարված ցանկացած փոփոխություն.

դ) նույն հարթակում ապահովի (ապահովեն) գործատուների, այդ թվում՝ հերթական գործատուների միջև համագործակցությունը, համակարգի (համակարգեն) նրանց աշխատանքները՝ 89/391/ԵՏՀ հրահանգի 6 (4) հոդվածով նախատեսված կարգով իրենց աշխատողներին պաշտպանելու և պատահարներն ու մասնագիտական հիվանդությունների վտանգները կանխելու նպատակով և փոխադարձ տեղեկատվությունը՝ ապահովելով, որ հարկ եղած դեպքում ինքնազբաղ անձինք ընդգրկվեն այս գործընթացում.

ե) համակարգի (համակարգեն) միջոցառումները՝ ստուգելու համար, որ աշխատանքային ընթացակարգերը ճիշտ են իրականացվում.

զ) ձեռնարկի (ձեռնարկեն) այնպիսի քայլեր, որոնք անհրաժեշտ են՝ ոչ իրավասու անձանց մուտքը շինարարական հարթակ կանխելու նպատակով:

Հոդված 7

Պատվիրատուների, ծրագրի ընթացքը վերահսկող անձանց և գործատուների պարտականությունները

1. Եթե պատվիրատուն կամ ծրագրի ընթացքը վերահսկող անձը նշանակել է համակարգող կամ համակարգողներ՝ 5-րդ և 6-րդ հոդվածներում նշված պարտականությունների կատարման համար, ապա պատվիրատուին կամ ծրագրի ընթացքը վերահսկող անձին դա չի ազատում այս առումով ստանձնած իր պարտականություններից:

2. 5-րդ և 6-րդ հոդվածների ու սույն հոդվածի 1-ին պարբերության իրականացումը չպետք է ներազդի գործատուների՝ 89/391/ԵՏՀ հոդվածով նախատեսված պարտականության սկզբունքի վրա:

Հոդված 8

89/391/ԵՏՀ հրահանգի 6-րդ հոդվածի իրականացումը

Աշխատանքների իրականացման ժամանակ կիրառվում են 89/391/ԵՏՀ հրահանգի 6-րդ հոդվածով սահմանված սկզբունքները, որոնք, մասնավորապես, վերաբերում են հետևյալին՝

ա) շինարարական հարթակը պետք է լինի պատշաճ և բավականին մաքուր վիճակում.

բ) աշխատատեղերի վայրը պետք է ընտրվի՝ հաշվի առնելով նշված աշխատատեղերի մուտքի հնարավորությունները, և պետք է որոշվեն անցնելու, տեղաշարժվելու և սարքավորումների ուղիները կամ տարածքները.

գ) տարբեր նյութերի հետ աշխատելու պայմանները.

դ) տեխնիկական սպասարկումը, սարքերի և սարքավորումների գործարկումից առաջ իրականացվող ստուգումները և պարբերական ստուգումները՝ շտկելու համար ցանկացած սխալ, որը կարող է ազդել աշխատողների անվտանգության և առողջության վրա.

ե) տարբեր նյութերի պահեստավորման տարածքների սահմանագծումը և չափանշումը, մասնավորապես, երբ խոսքը գնում է վտանգավոր նյութերի մասին.

զ) օգտագործված վտանգավոր նյութերի վերացման պայմանները.

է) շինարարական թափոնների ու աղբի պահեստավորումը և հեռացումը կամ վերացումը.

ը) հիմք ընդունելով հարթակի մասով առաջընթացը, տարբեր տեսակի աշխատանքների կամ աշխատանքի փուլերի համար հատկացվելիք փաստացի ժամանակահատվածի փոփոխությունը.

թ) գործատուների և ինքնազբաղ անձանց միջև համագործակցությունը.

ժ) շինարարական հարթակում կամ դրա շրջակայքում գտնվող տարածքում արտադրական գործունեության հետ ունեցած փոխազդեցությունը:

Հոդված 9

Գործատուների պարտականությունները

Շինարարական հարթակի վրա անվտանգության և առողջության պահպանման նպատակով գործատուները 6-րդ և 7-րդ հոդվածներով սահմանված պայմանների համաձայն, պետք է.

ա) մասնավորապես 8-րդ հոդվածն իրականացնելիս ձեռնարկեն միջոցներ, որոնք համահունչ են IV հավելվածով սահմանված նվազագույն պահանջներին.

բ) հաշի առնեն անվտանգության և առողջության ապահովման հարցերով համակարգողի (համակարգողների) ցուցումները:

Հոդված 10

Անձանց այլ խմբերի պարտականությունները

1. Շինարարական հարթակի վրա անվտանգության և առողջության պահպանման նպատակով ինքնազբաղ անձինք պետք է.

ա) համապատասխան փոփոխություններով համապատասխանեն, մասնավորապես, հետևյալին՝

i) 89/391/ԵՏՀ հրահանգի 6 (4) հոդվածի, 13-րդ հոդվածի և սույն Հրահանգի 8-րդ հոդվածի ու IV հավելվածի պահանջներին.

ii) 89/655/ԵՏՀ հրահանգի 4-րդ հոդվածի և դրա հավելվածի համապատասխան դրույթներին.

iii) 89/656/ԵՏՀ հրահանգի 3-րդ հոդվածին, 4 (1)-(4) և (9) ու 5-րդ հոդվածներին.

բ) հաշվի առնեն անվտանգության և առողջության ապահովման հարցերով համակարգողի (համակարգողների) ցուցումները:

2. Շինարարական հարթակի վրա անվտանգության և առողջության պահպանման նպատակով գործատուները շինարարական հարթակում աշխատանքների մեջ անձամբ ներգրավվելու դեպքում պետք է.

ա) հետևեն , մասնավորապես, հետևյալ համապատասխան փոփոխություններին՝

i) 89/391/ԵՏՀ հրահանգի 13-րդ հոդվածին.

ii) 89/655/ԵՏՀ հրահանգի 4-րդ հոդվածին և դրա հավելվածի համապատասխան դրույթներին.

iii) 89/656/ԵՏՀ հրահանգի 3-րդ հոդվածին, 4 (1), (2), (3), (4), (9) և 5-րդ հոդվածներին.

բ) հաշվի առնեն անվտանգության և առողջության ապահովման հարցերով համակարգողի (համակարգողների) դիտողությունները:

Հոդված 11

Աշխատողների համար տեղեկությունները

1. Չհակասելով 89/391/ԵՏՀ հրահանգի 10-րդ հոդվածին՝ աշխատողները և (կամ) նրանց ներկայացուցիչները պետք է տեղեկանան շինարարական հարթակում անվտանգության և առողջության ապահովման նպատակով ձեռնարկվող բոլոր միջոցների մասին:

2. Տեղեկությունները պետք է համապատասխան աշխատողների համար հասկանալի լինեն:

Հոդված 12

Աշխատողների հետ խորհրդակցությունը և նրանց մասնակցությունը

Աշխատողների և (կամ) նրանց ներկայացուցիչների հետ խորհրդակցությունը կամ նրանց մասնակցությունը տեղի է ունենում 89/391/ԵՏՀ հրահանգի 11-րդ հոդվածին համապատասխան՝ սույն Հրահանգի 6-րդ, 8-րդ և 9-րդ հոդվածներով կարգավորվող խնդիրների շուրջ՝ ապահովելով, հարկ եղած դեպքում, աշխատավայրում իրենց գործունեությամբ զբաղվող կազմակերպություններում աշխատողների և (կամ) աշխատողների ներկայացուցիչների միջև աշխատանքների պատշաճ համակարգումը՝ հաշվի առնելով ռիսկի աստիճանը և աշխատանքային հարթակի չափսը:

Հոդված 13

Հավելվածների փոփոխությունը

1. I, II և III հավելվածների փոփոխություններն ընդունվում են Խորհրդի կողմից՝ Պայմանագրի 118ա հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

2. IV հավելվածի խիստ տեխնիկական բնույթի փոփոխությունները, որոնք բխում են՝

– ժամանակավոր կամ շարժական շինարարական հարթակների վերաբերյալ տեխնիկական ներդաշնակեցման և ստանդարտացման մասին հրահանգների ընդունումից.

– ժամանակավոր կամ շարժական շինարարական հարթակների ոլորտում տեխնիկական առաջընթացից, միջազգային կանոնակարգերի կամ մասնագրերի, կամ գիտելիքների փոփոխությունից.

ընդունվում են 89/391/ԵՏՀ հրահանգի 17-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

Հոդված 14

Եզրափակիչ դրույթներ

1. Անդամ պետությունները սույն Հրահանգի կատարման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական ակտերը պետք է գործողության մեջ դնեն 1993 թվականի դեկտեմբերի 31-ից ոչ ուշ:

Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

2. Երբ անդամ պետություններն ընդունում են նշված միջոցները, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին, կամ ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակմամբ պայմանավորված: Նման հղում կատարելու եղանակները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

3. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ազգային իրավունքի դրույթների տեքստերը, որոնք արդեն ընդունվել կամ ընդունվում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

4. Անդամ պետությունները յուրաքանչյուր չորս տարին մեկ անգամ սույն Հրահանգի դրույթների գործնական կիրառման վերաբերյալ հաշվետվություն են ներկայացնում Հանձնաժողով՝ նշելով աշխատողների և գործատուների տեսակետները:

Հանձնաժողովը տեղեկացնում է Եվրոպական պառլամենտին, Խորհրդին, Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեին ու Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի ու առողջության պահպանման հարցերով խորհրդատվական կոմիտեին:

5. Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտ, Խորհուրդ և Տնտեսական ու սոցիալական հարցերով կոմիտե սույն Հրահանգի կիրառման վերաբերյալ պարբերական հաշվետվություն է ներկայացնում՝ հաշվի առնելով 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ պարբերությունները:

Հոդված 15

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Լյուքսեմբուրգում, 1992 թվականի հունիսի 24-ին:

Խորհրդի կողմից՝

Նախագահ Խոսե դա Սիլվա ՊեՆԵՂԱ

1) ՊՏ թիվ C 213, 28. 08. 1990թ., էջ 2 և ՊՏ թիվ C 112, 27. 04. 1991թ., էջ 4: 2) ՊՏ թիվ C 78, 18. 03. 1990թ., էջ 172 և ՊՏ թիվ C 150, 15. 06. 1992թ.: 3) ՊՏ թիվ C 120, 06. 05. 1991թ., էջ 24: 4) ՊՏ թիվ C 28, 03. 02. 1988թ., էջ 3: 5) ՊՏ թիվ C 28, 03. 02. 1988թ., էջ 1: 6) ՊՏ թիվ L 393, 30. 12. 1989թ., էջ 13: 7) ՊՏ թիվ L 393, 30. 12. 1989թ., էջ 18: 8) ՊՏ թիվ L 183, 29. 06. 1989թ., էջ 1: 9) ՊՏ թիվ L 40, 11. 02. 1989թ., էջ 12: 10) ՊՏ թիվ L 210, 21. 07. 1989թ., էջ 1: Փոփոխված՝ Հանձնաժողովի 90/380/ԵՏՀ որոշմամբ Փոփոխված (ՊՏ թիվ L 187, 19. 07. 1990թ., էջ 55): 11) ՊՏ թիվ L 185, 09. 07. 1974թ., էջ 15: Վերջին անգամ փոփոխվել է «Անդամակցության մասին» 1985 թվականի ակտով: 12) ՊՏ թիվ L 185, 09. 07. 1974, էջ 18:

ՀԱՎԵԼՎԱԾ I

**ՀՐԱՀԱՆԳԻ 2 (ա) ՀՈԴՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԱՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՉ ՍՊԱՌԻՉ ՑԱՆԿԸ**

1. Հիմքի փորում
2. Հողային աշխատանքներ
3. Շինարարություն
4. Գործարանային արտադրության հավաքովի տարրերի կոմպլեկտավորում և ապամոնտաժում
5. Վերապլանավորում կամ տեխնիկական համալրում
6. Փոփոխություններ
7. Վերականգնում
8. Վերանորոգում
9. Ապամոնտաժում
10. Քանդում
11. Շահագործում/Պահպանություն
12. Տեխնիկական սպասարկում. ներկարարական և մաքրման աշխատանքներ
13. Զրահեռացում

ՀԱՎԵԼՎԱԾ II

**ՀՐԱՀԱՆԳԻ 3 (2) ՀՈԴՎԱԾԻ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆՇՎԱԾ՝
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՍՊԱՌՆԱՅՈՂ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՌԻՍԿԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՉ ՍՊԱՌԻՉ ՑԱՆԿԸ**

1. Աշխատանք, որի կատարման ժամանակ աշխատողները կարող են սողանքի տակ մնալ, ճահճուտներում թաղվել կամ բարձրությունից ընկնել, և երբ ռիսկը, մասնավորապես, մեծանում է՝ աշխատանքի բնույթի կամ աշխատավայրում, կամ հարթակում (*) իրականացվող գործընթացների կամ շրջակա միջավայրի պատճառով:
2. Աշխատանք, որի կատարման ժամանակ աշխատողները ենթակա են աշխատողների անվտանգության և առողջության համար հատուկ վտանգ ներկայացնող քիմիական կամ կենսաբանական նյութերի ազդեցության, կամ որոնց դեպքում առողջական վիճակի հսկողության իրավական պահանջ է առկա :
3. Իոնացնող ճառագայթմամբ աշխատանք, որը պահանջում է 80/836/Եվրատոմ (') հրահանգի 20-րդ հոդվածով սահմանված՝ հսկվող կամ վերահսկվող տարածքների սահմանում:
4. Աշխատանք, որը գտնվում է բարձր լարման էլեկտրագծերի մոտ:
5. Աշխատանք, որի կատարման ժամանակ առկա է աշխատողների խեղդվելու ռիսկ:
6. Աշխատանք ջրհորների և ստորգետնյա հողային աշխատանքների ու թունելների վրա:
7. Աշխատանք, որն իրականացվում է օդի մատակարարման համակարգ ունեցող ավտոմեքենաների վարորդների կողմից.
8. Աշխատանք, որը կատարվում է աշխատողների կողմից սեղմված օդի միջավայրում:
9. Աշխատանք, որը կատարվում է պայթուցիկների օգտագործմամբ:
10. Գործարանային արտադրության ծանր բաղադրիչների կոմպլեկտավորման կամ ապամոնտաժման աշխատանքներ ներառող աշխատանք:

(*) 1-ին կետն իրականացնելիս անդամ պետություններն առանձին իրավիճակների համար թվեր սահմանելու այլընտրանքային տարբերակ ունեն:

1) ՊՏ թիվ L 246, 17.09.1980թ., էջ 1:Վերջին անգամ 84/467/Եվրատոմ հրահանգով փոփոխված (ՊՏ թիվ L 265, 05.10.1984թ., էջ 4):

ՀԱՎԵԼՎԱԾ III

ՀՐԱՀԱՆԳԻ 3 (3) ՀՈԴՎԱԾԻ ԱՌԱՋԻՆ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆՇՎԱԾ՝ ՆԱԽՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Ուղարկելու ամսաթիվը.
2. Շինարարական հարթակի ճշգրիտ հասցեն.
3. Պատվիրատուն (պատվիրատուները) (անունը (անունները) և հասցեն (հասցեները)).
4. Ծրագրի տեսակը.
5. Ծրագրի ընթացքը վերահսկող անձը (անձինք) (անունը (անունները) և հասցեն (հասցեները)).....
6. Ծրագրի նախապատրաստական փուլի ընթացքում անվտանգության և առողջության ապահովման հարցերի համակարգողը (համակարգողները) (անունը (անունները) և հասցեն (հասցեները)).
7. Ծրագրի իրականացման փուլի ընթացքում անվտանգության և առողջության ապահովման հարցերի համակարգողը (համակարգողները) (անունը (անունները) և հասցեն (հասցեները)).
8. Շինարարական հարթակում աշխատանքների մեկնարկի նախատեսված ամսաթիվը.
9. Շինարարական հարթակում աշխատանքների նախատեսված տևողությունը.
10. Շինարարական հարթակում սահմանված աշխատողների առավելագույն թիվը.
11. Շինարարական հարթակում կապալառուների և ինքնազբաղ անձանց նախատեսված թիվը.
12. Արդեն ընտրված կապալառուների վերաբերյալ մանրամասները:

ՀԱՎԵԼՎԱԾ IV

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Նշված է հրահանգի 9 (ա) և 10 (1) (ա) (i) հոդվածներում

Նախնական դիտարկումներ

Սույն հավելվածով սահմանված պարտավորությունները կիրառվում են, եթե պահանջվում է շինարարական հարթակի, գործունեության առանձնահատկություններով, հանգամանքներով կամ վտանգի դեպքում:

Սույն հավելվածի նպատակներով «սենյակներ» նշանակում է, մասնավորապես, ծածկով կացարան:

ՄԱՍ Ա. ԱՇԽԱՏԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Կայունությունը և ամրությունը

1.1. Նյութերը, սարքավորումները և, առավել ընդհանուր, ցանկացած բաղադրիչ, որը որևէ կերպ տեղաշարժելիս, կարող է ազդել աշխատողների անվտանգության և առողջության վրա, պետք է պատշաճ և անվտանգ կերպով կայունացվի:

1.2. Արգելվում է մուտքը ոչ բավարար կայուն նյութերից կառուցված ցանկացած մակերես, քանի դեռ չի տրամադրվել համապատասխան սարքավորում կամ միջոց, որը հնարավորություն կտա անվտանգ իրականացնելու աշխատանքը:

2. Էներգիայի բաշխման համար նախատեսված կայանքները

2.1. Սարքերը պետք է նախագծվեն, կառուցվեն և օգտագործվեն այնպես, որ հրդեհի կամ պայթյունի վտանգ չլինի, աշխատողները պետք է համապատասխանորեն պաշտպանված լինեն ուղղակի կամ անուղղակի շփման հետևանքով առաջացող էլեկտրական հոսանքի հետ կապված դժբախտ պատահարների վտանգից:

2.2. Սարքավորումների ու պաշտպանական սարքերի նախագծման, կառուցման ու ընտրության ժամանակ պետք է հաշվի առնվեն բաշխված էներգիայի տեսակն ու հզորությունը, արտաքին պայմանները, ինչպես նաև կայանքի մասերին մուտք ունեցող անձանց իրավասությունը:

3. Վթարային անցուղիները և ելքերը

3.1. Դեպի վթարային ելքերը տանող վթարային անցուղիները և վթարային ելքերը պետք է մշտապես պահվեն ազատ վիճակում և տանեն հնարավորինս անմիջապես անվտանգ վայր:

3.2. Վտանգի դեպքում աշխատողները պետք է հնարավորություն ունենան արագ և անվտանգ կերպով տարհանելու բոլոր աշխատակայանները:

3.3. Վթարային անցուղիների և ելքերի թիվը, բաշխվածությունը և չափսերը կախված են հարթակի ու սենյակների օգտագործումից, սարքավորումներից և չափսերից ու մարդկանց առավելագույն թվից:

3.4. Հատուկ վթարային անցուղիները և ելքերը պետք է նշաններով ցույց տրվեն՝ 77/576/ԵՏՀ հրահանգը կիրարկող ազգային կանոնակարգերին համապատասխան (1):

Նշված նշանները պետք է լինեն բավական ամուր և տեղադրվեն համապատասխան վայրերում:

3.5. Վթարային անցուղիները և ելքերը, ինչպես նաև դրանց միացող երթուղիներն ու դռները պետք է ազատ լինեն որևէ խոչընդոտներից այնպես, որ դրանք յուրաքանչյուր պահի օգտագործվեն առանց խոչընդոտների:

3.6. Հոսանքազրկման դեպքում լուսավորության կարիք ունեցող վթարային անցուղիները և ելքերը պետք է ապահովվեն բավարար հզորությամբ վթարային լուսավորությամբ:

4. Հրդեհի բացահայտումը և մարումը

4.1. Հաշվի առնելով հարթակի բնութագրերը, սենյակների չափսերը և օգտագործման նպատակները, տարածքում տեղադրված սարքավորումները, առկա նյութերի ֆիզիկական և քիմիական հատկությունները, ներկա գտնվող մարդկանց հնարավոր առավելագույն թիվը, աշխատանքի վայրում պետք է տեղադրված լինեն հակահրդեհային բավարար թվով հակահրդեհային համապատասխան սարքեր, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հրդեհի ազդասարքեր և ազդանշանային համակարգեր:

1) ՊՏ թիվ L 229, 07.09.1977թ., էջ 12:Վերջին անգամ փոփոխված՝ 79/640/ԵՏՀ հրահանգով (ՊՏ թիվ L 183, 19.07.1979թ., էջ 1):

4.2. Հակահրդեհային սարքերը, հրդեհի ազդասարքերը և ազդանշանային համակարգերը պետք է պարբերաբար ստուգվեն և պահպանվեն:

Անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել համապատասխան փորձարկումներ և վարժանքներ:

4.3. Ոչ ավտոմատ հակահրդեհային սարքերը պետք է լինեն հեշտ հասանելի, իսկ օգտագործման տեսանկյունից՝ պարզ:

Սարքերը պետք է ցույց տրվեն նշաններով՝ 77/576/ԵՏՀ հրահանգը կիրարկող ազգային կանոնակարգերին համապատասխան:

Նշված նշանները պետք է բավարար ամուր լինեն և տեղադրվեն համապատասխան վայրերում:

5. Օդափոխումը

Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել, որպեսզի աշխատավայրում լինի բավարար ծավալով մատակարարվող մաքուր օդ՝ հաշվի առնելով աշխատանքի կազմակերպման կիրառվող մեթոդները և աշխատողների վրա դրված ֆիզիկական պահանջները:

Արհեստական օդափոխության համակարգի կիրառման դեպքում այն պետք է պահվի սարքին վիճակում, և աշխատողները չպետք է ենթարկվեն առողջությանը վնասող միջանցիկ քամիների ազդեցությանը:

Խափանման ցանկացած դեպքի մասին պետք է ազդանշան տրվի կառավարման համակարգի միջոցով, եթե դա անհրաժեշտ է՝ աշխատողների առողջության համար:

6. Կոնկրետ ռիսկերին ենթարկվելը

6.1. Աշխատողները չպետք է ենթարկվեն աղմուկի վնասակար մակարդակից բխող ռիսկերի կամ վնասական արտաքին ազդեցությունների (ինչպես օրինակ՝ գազը, գոլորշին, փոշին):

6.2. Եթե աշխատողներն ստիպված են մուտք գործել այնպիսի տարածք, որտեղ մթնոլորտում կարող են թունավոր կամ վտանգավոր նյութեր լինել, կամ որտեղ չկա բավարար ծավալով մատակարարվող օդ, կամ առկա է հրդեհավտանգ մթնոլորտ, ապա փակ տարածքը պետք է դիտանցման ենթարկվի, և պետք է քայլեր ձեռնարկվեն՝ ցանկացած վտանգ կանխելու նպատակով:

6.3. Աշխատողը ոչ մի դեպքում չպետք է աշխատի բարձր ռիսկ ներկայացնող փակ մթնոլորտում:

Նա պետք է դրսից առնվազն ամբողջ ժամանակ լինի հսկողության ներքո, և անհրաժեշտ է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ կանխարգելման միջոցները, որպեսզի նրա համար ապահովվի արագ և արդյունավետ օգնություն:

7. Ջերմաստիճանը

Աշխատանքային ժամերին աշխատավայրի ջերմաստիճանը պետք է բավարար լինի մարդկանց համար՝ հաշվի առնելով աշխատանքի կազմակերպման կիրառվող մեթոդները և աշխատողների վրա դրված ֆիզիկական պահանջները:

8. Աշխատատեղերի, սենյակների և հարթակի վրա երթուղիների բնական ու արհեստական լուսավորումը

8.1. Աշխատատեղերը, սենյակները և երթևեկության ուղիները պետք է հնարավորինս ապահովված լինեն բավարար բնական լուսավորությամբ և բավարար արհեստական լուսավորությամբ՝ գիշերները և բնական ցերեկային լույսի անբավարար լինելու դեպքում: , Պետք է հարկ եղած դեպքում օգտագործվեն շարժական լույսի աղբյուրներ, որոնք պաշտպանված են ազդեցությունից:

Օգտագործվող արհեստական լույսի գույնը չպետք է փոխի կամ ազդի ազդակների կամ նշանների ընկալման վրա:

8.2. Սենյակներում, աշխատատեղերում և երթուղիներում լուսային սարքերը պետք է տեղադրվեն այնպես, որ բացառվի ամրացված լուսային սարքի պատճառով աշխատողների հետ պատահող հնարավոր դժբախտ պատահարի ռիսկը:

8.3. Այն սենյակներում, աշխատատեղերում և երթուղիներում, որտեղ աշխատողները հատկապես ենթակա են ռիսկի, արհեստական լուսավորության խափանումների դեպքում պետք է ապահովվեն բավարար հզորությամբ վթարային լուսավորությամբ:

9. Դռները և դարպասները

9.1. Սահող (տարաշարժուն) դռները պետք է ունենան անվտանգության սարք՝ ռելսերից դուրս գալու կամ վայր ընկնելու վտանգը կանխելու նպատակով:

9.2. Առաջ բացվող դռներին ու դարպասներին պետք է ամրացված լինեն համապատասխան մեխանիզմներ, որոնք թույլ չեն տա դրանց հետ ընկնելը:

9.3. Տարհանման ելքեր Տարհանման ուղիներով դռների ու դարպասների վրա պետք է համապատասխանաբար նշումներ արվեն:

9.4. Գլխավորապես տրանսպորտային փոխադրամիջոցների երթևեկության համար նախատեսված դարպասներին անմիջականորեն հարող տարածքում պետք է տեղադրվեն դռներ՝ հետիոտների համար, եթե վերջիններս կարող են դրանք անվտանգ անցնել, իսկ նշված դռները պետք է հստակորեն նշված լինեն և մշտապես ազատ պահվեն:

9.5. Մեխանիկական դռներն ու դարպասները պետք է աշխատեն այնպես, որ աշխատողների համար չառաջացնեն դժբախտ պատահարի որևէ ռիսկ:

Դրանք պետք է ունենան հեշտ բացահայտվող և հասանելի տեղում ամրացված վթարային անջատման սարք, և եթե հոսանքազրկման ժամանակ դրանք ավտոմատ կերպով չեն բացվում, ապա պետք է հնարավոր լինի այն ձեռքով բացել :

10. Երթուղիները – վտանգավոր տարածքները

10.1. Երթուղիները, այդ թվում՝ աստիճանները, ամրացված ձեռնասանդուղքները, բեռնահարթակները և թեքահարթակները պետք է այնպես հաշվարկվեն, տեղակայվեն, տեղադրվեն և անցնելու համար հասանելի լինեն, որպեսզի ապահովվեն մուտքի հեշտ, անվտանգ և համապատասխան մատչելի հնարավորություն՝ առանց վտանգ ներկայացնելու երթուղիների մոտակայքում աշխատող աշխատողների համար:

10.2. Հետիոտների և (կամ) ապրանքների տեղափոխման համար նախատեսված անցուղիները, այդ թվում՝ բեռնման և բեռնաթափման համար օգտագործվող անցուղիները, պետք է ունենան հնարավոր օգտագործողների թվին և գործունեության տեսակին համապատասխանող չափսեր:

Երթուղիներով տրանսպորտային փոխադրամիջոցների շարժի դեպքում հարթակի մյուս օգտագործողներին պետք է հատկացվի բավարար չափսեր ունեցող անվտանգ տարածություն կամ համապատասխան պաշտպանական միջոցներ:

Երթուղիների վրա պետք է հստակ նշումներ արվեն, պարբերաբար ստուգվեն և պատշաճորեն պահպանվեն:

10.3. Բավարար չափսեր ունեցող տարածություն պետք է նախատեսվի տրանսպորտային փոխադրամիջոցներին հատկացված ճանապարհների և դռների, դարպասների, հետիոտնային անցուղիների, միջանցքների ու սանդուղքների միջև:

10.4. Եթե հարթակում կան մուտքի սահմանափակմամբ տարածքներ, ապա դրանք պետք է հնարավորինս հագեցած լինեն ոչ իրավասու անձանց մուտքն արգելող սարքերով:

Անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ վտանգավոր տարածքներ մուտք գործելու իրավասություն ունեցող անձանց պաշտպանելու նպատակով:

Վտանգավոր տարածքների վրա պետք է լինեն հստակ նախազգուշական նշաններ:

11. Բեռնահարթակները և թեքահարթակները

11.1. Բեռնահարթակները և թեքահարթակները պետք է համապատասխանեն փոխադրվող բեռների չափսերին:

11.2. Բեռնահարթակները պետք է ունենան առնվազն մեկ ելք:

11.3. Բեռնահարթակները պետք է լինեն հնարավորինս անվտանգ՝ դրանց վրայից աշխատողների վայր ընկնելը կանխելու համար:

12. Աշխատակայանում տեղաշարժվելու ազատությունը

Աշխատակայանի ընդհանուր մակերեսը պետք է աշխատողներին իրենց աշխատանքը կատարելու համար տա տեղաշարժվելու բավարար ազատություն՝ հաշվի առնելով առկա ցանկացած անհրաժեշտ սարքավորում կամ էլեկտրական սարք:

13. Առաջին օգնություն

13.1. Գործատուն պետք է աշխատավայրում ապահովի առաջին օգնության տրամադրումը, ինչպես նաև վերապատրաստված անձնակազմի կողմից ցանկացած ժամանակ դրա ապահովումը:

Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել, որպեսզի այն աշխատողները, որոնց հետ դժբախտ պատահար է տեղի ունեցել, կամ որոնք հանկարծակի հիվանդացել են, բուժում ստանալու նպատակով դուրս բերվեն :

13.2. Մեկ կամ ավելի առաջին օգնության սենյակներ պետք է տրամադրվեն, եթե նման անհրաժեշտությունը պայմանավորված է աշխատանքի ծավալով կամ իրականացվող գործունեության տեսակներով:

13.3. Առաջին օգնության սենյակները պետք է հագեցած լինեն առաջին օգնության հիմնական սարքավորումներով և սարքերով, ինչպես նաև մատչելի լինեն պատգարակների մուտքի և ելքի համար:

Դրանք պետք է ցույց տրվեն նշաններով՝ 77/576/ԵՏՀ հրահանգը կիրարկող ազգային կանոնակարգերին համապատասխան:

13.4. Ավելին, առաջին օգնության սարքավորումները պետք է մատչելի լինեն բոլոր այն վայրերում, որտեղ աշխատանքային պայմանները պահանջում են:

Այս սարքավորումների վրա պետք է համապատասխան ձևով նշումներ կատարվեն և լինեն հեշտ հասանելի:

Տեղական փրկարար ծառայության հասցեն և հեռախոսահամարը պետք է փակցվեն տեսանելի վայրում:

14. Սանիտարական և հիգիենիկ/տեխնիկական հարմարությունները

14.1. Հանդերձարանները և պահարանները

14.1.1. Աշխատողները պետք է ապահովվեն համապատասխան հանդերձարաններով, եթե նրանք պետք է կրեն հատուկ աշխատանքային հագուստ, և եթե առողջության կամ պարկեշտության նկատառումներից ելնելով, աշխատողները չեն կարող փոխել հագուստը որևէ այլ տեղում:

Հանդերձարանները պետք է լինեն հեշտ հասանելի, ունենան բավարար տարողունակություն և նստելու տեղեր:

14.1.2. Հանդերձարանները պետք է լինեն բավական ընդարձակ և ունենան այնպիսի հարմարություններ, որպեսզի յուրաքանչյուր աշխատող, հարկ եղած դեպքում, չորացնի իր աշխատանքային հագուստները, ինչպես նաև իր հագուստներն ու անձնական իրերը և դրանք դնի փակվող պահարանում:

Պայմանավորված հանգամանքներով (օրինակ՝ վտանգավոր նյութեր, խոնավություն, կեղտ)՝ պետք է հարմարություններ ստեղծվեն՝ հնարավորություն տալով աշխատանքային հագուստը ոչ աշխատանքային հագուստից և անձնական իրերից առանձին պահելու համար:

14.1.3. Պետք է դրույթներ նախատեսել տղամարդկանց և կանանց համար՝ առանձին հանդերձարաններ կամ միևնույն հանդերձարանի առանձնացված օգտագործում ապահովելու նպատակով:

14.1.4. Եթե 14.1.1 կետի առաջին պարբերության մեջ նշված հանդերձարաններն անհրաժեշտ չեն, ապա յուրաքանչյուր աշխատողի պետք է հատկացվի մի տեղ, որտեղ նա կարող է տեղավորել իր սեփական հագուստներն ու անձնական իրերը և փակել այն:

14.2. Լողացնցուղիները և լվացարանները

14.2.1. Պետք է ապահովել բավարար թվով հարմար լողացնցուղներ, եթե դա է պահանջում աշխատանքի բնույթը կամ առողջական վիճակը:

Պետք է դրույթներ նախատեսել՝ տղամարդկանց և կանանց համար առանձին ցնցուղասենյակներ կամ միևնույն ցնցուղասենյակներից առանձնացված օգտագործում ապահովելու համար:

14.2.2. Ցնցուղասենյակները պետք է բավարար չափով ընդարձակ լինեն՝ հիգիենայի համարժեք պայմաններում առանց դժվարությունների լողանալու համար:

Լողացնցուղները պետք է ապահովված լինեն հոսող սառը և տաք ջրերով:

14.2.3. Եթե 14.2.1 հոդվածի առաջին ենթապարբերությամբ լողացնցուղների առկայությունը պարտադիր չէ, ապա պետք է ապահովել հոսող ջրով (անհրաժեշտության դեպքում՝ տաք ջրով) ապահովված համապատասխան և հարմար վացարաններով աշխատակայանների և հանդերձարանների մոտակայքում:

Պետք է դրույթներ նախատեսել տղամարդկանց և կանանց համար առանձին վացարաններ կամ միևնույն վացարանների առանձնացված օգտագործում ապահովելու համար՝ ելնելով պարկեշտությունից:

14.2.4. Եթե սենյակները, որտեղ գտնվում են լողացնցուղները կամ վացարանները, առանձնացված են հանդերձարանից, պետք է ապահովել դրանց միջև դյուրին մուտքն ու ելքը:

14.3. Ջուգարանները և վացարանները

Աշխատողների համար պետք է ապահովել բավարար թվով զուգարանակոնքերով և վացարաններով առանձին հարմարություններ, որոնք գտնվում են աշխատակայանների, հանգստի սենյակների, հանդերձարանների և ցնցուղասենյակների կամ վացարանների սենյակների մոտակա տարածքներում:

Պետք է դրույթներ նախատեսել՝ տղամարդկանց և կանանց համար առանձին զուգարաններ կամ միևնույն զուգարանի առանձնացված օգտագործում ապահովելու համար:

15. Հանգստի սենյակները և (կամ) կացարանները

15.1. Աշխատողների անվտանգության և առողջության ապահովման, մասնավորապես, իրականացվող գործունեության բնույթով պայմանավորված կամ աշխատողների որոշակի

քանակից ավելի աշխատողների առկայության դեպքում, ինչպես նաև աշխատավայրից հեռու գտնվելու հիմքով՝ աշխատողները պետք է ապահովվեն հեշտ հասանելի հանգստի սենյակներով և (կամ) կացարաններով:

15.2. Հանգստի սենյակները և (կամ) կացարանները պետք է լինեն բավականաչափ ընդարձակ և ունենան բավարար թվով սեղաններ, հենակներով աթոռներ, որոնց քանակությունը պետք է համապատասխանի աշխատողների թվին:

15.3. Եթե հանգստի նման հարմարություններ գոյություն չունեն, ապա պետք է աշխատողների համար ապահովել այլ հարմարություններ, որտեղ նրանք կարող են գտնվել ընդմիջումների ընթացքում:

15.4. Եթե մշտական կացարանները միայն բացառիկ դեպքերում չեն, որ օգտագործվում են, ապա դրանք պետք է ունենան բավարար սանիտարական և հիգիենիկ հարմարություններ, հանգստի ու ժամանցի սենյակներ:

Դրանք պետք է կահավորված լինեն աշխատողների թվին համապատասխան մահճակալներով, պահարաններով, սեղաններով և հենակներ ունեցող աթոռներով՝ հաշվի առնելով աշխատողների թիվը և հատկացվեն, հարկ եղած դեպքում, ներկա գտնվող կին և տղամարդ աշխատողների թվին համապատասխան:

15.5. Անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ հանգստի սենյակներում և (կամ) կացարաններում ծխախոտի ծխի պատճառած անհարմարությունից չծխողների պաշտպանությունն ապահովելու համար:

16. Հղի կանայք և կերակրող մայրերը

Հղի կանայք և կերակրող մայրերը պետք է պատշաճ պայմաններում հանգստանալու նպատակով պառկելու հնարավորություն ունենան:

17. Հաշմանդամ աշխատողները

Աշխատավայրերը անհրաժեշտության դեպքում պետք է կազմակերպված լինեն հաշմանդամ աշխատողների կարիքները հաշվի առնելով:

Սույն դրույթը կիրառվում է, մասնավորապես, հաշմանդամների կողմից ուղղակիորեն օգտագործվող դռների, միջանցքների, աստիճանավանդակների, լողացնցուղիների, լվացարանների, սանհանգույցի և աշխատակայանների նկատմամբ:

18. Այլ դրույթներ

18.1. Հարթակի շրջակայքը և պարագիծը պետք է ցույց տրվեն նշաններով և նախագծվեն այնպես, որ դրանք հստակ տեսանելի և ճանաչելի լինեն:

18.2. Հարթակում աշխատողներին պետք է տրամադրել բավարար քանակությամբ խմելու ջուր, իսկ, հնարավորության դեպքում, զբաղեցրած սենյակներում և աշխատակայանների շրջակայքում մեկ այլ հարմար ոչ ակոհոլային խմիչք:

18.3. Աշխատողներին պետք է՝

- տրամադրվի բավարար պայմաններում սնվելու հնարավորություն ընձեռող հարմարություններ.
- հարկ եղած դեպքում, տրամադրվի բավարար պայմաններում իրենց սնունդը պատրաստելու հնարավորություն ընձեռող հարմարություններ:

ՄԱՍ Բ. ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՏՈՒԿ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋԸ

Նախնական դիտարկումը

Եթե հատուկ իրավիճակներն այդպես են պահանջում, ապա նշված նվազագույն պահանջների դասակարգումը՝ ըստ ստորև ներկայացված երկու բաժնի, չպետք է պարտադիր համարվի:

Բաժին I. Տարածքի ներսում տեղակայված փակ աշխատատեղերը. 1. Կայունությունը և հուսալիությունը

Տարածքները պետք է ունենան օգտագործման իրենց բնույթին համապատասխան կառուցվածք և կայունություն:

2. Վթարային դռները

Վթարային դռները պետք է բացվեն դեպի դուրս:

Վթարային դռները չպետք է կողպվեն կամ փակվեն այնպես, որ որևէ մեկը, ում անհրաժեշտ է օգտվել դրանից, վթարի դեպքում, չկարողանա դրանք հեշտությամբ և անմիջապես բացել:

Չի թույլատրվում սահող (տարաշարժուն) կամ պտտվող դռներ տեղադրել վթարային ելքերի դեպքում:

3. Օդափոխումը

Օդակարգավորիչների կամ մեխանիկական օդափոխության սարքավորումների օգտագործման դեպքում դրանք պետք է շահագործվեն այնպես, որ աշխատողները չենթարկվեն միջանցիկ քամիների բացասական ազդեցությանը:

Օդի աղտոտման միջոցով աշխատողների առողջության համար անմիջական վտանգավոր թափոնների կամ աղբի կույտերը պետք է անհապաղ հեռացվեն:

4. Ջերմաստիճանը

4.1. Հանգստի տարածքների, հերթապահ աշխատողների համար նախատեսված սենյակների, սանհանգույցների, ճաշարանների և առաջին օգնություն ցույց տալու համար նախատեսված սենյակների ջերմաստիճանը պետք է համապատասխանի նշված տարածքների նպատակային նշանակությանը:

4.2. Պատուհանների, լուսանցքների և ապակյա միջնապատերի միջով աշխատավայր ներթափանցող արևային լույսը պետք է չափավոր լինի՝ հաշվի առնելով աշխատանքի բնույթը և սենյակի օգտագործումը:

5. Բնական և արհեստական լուսավորությունը

Աշխատավայրը պետք է ստանա հնարավորինս բավարար բնական լուսավորություն, ինչպես նաև ունենա արհեստական լուսավորության սարքեր՝ աշխատողների անվտանգության և առողջության ապահովման համար:

6. Սենյակների հատակները, պատերը, առաստաղները և տանիքները

6.1. Աշխատավայրերի հատակները չպետք է ունենան վտանգավոր ուռուցիկություններ, փոսեր կամ թեքություններ, պետք է լինեն ամուր, կայուն և պետք է սայթաքուն չլինեն:

6.2. Սենյակների հատակների, պատերի և առաստաղների մակերեսը պետք է լինի այնպիսին, որ հնարավոր լինի սահմանված սանիտարական նորմերին համապատասխան, մաքրել կամ նորացնել դրանք:

6.3. Սենյակներում կամ աշխատատեղերի և երթուղիների մոտակայքում գտնվող թափանցիկ և կիսաթափանցիկ պատերը, մասնավորապես, ապակյա միջնապատերը, պետք է հստակ նշագրվեն, պատրաստված լինեն անվտանգ նյութերից կամ պաշտպանված լինեն կտորման կամ բախման պարագայում աշխատողներին մարմնական վնասվածք պատճառելու հնարավոր դեպքերից:

7. Պատուհանները և լուսանցքները

7.1. Աշխատողները պետք է հնարավորություն ունենան անվտանգ կերպով բացելու, փակելու կարգավորելու, ամրացնելու պատուհանները, լուսանցքները և օդափոխիչները:

Բաց վիճակում պատուհանները, լուսանցքները և օդափոխիչները չպետք է տեղադրված լինեն այնպես, որ վտանգավոր լինեն աշխատողների համար:

7.2. Պատուհանների և լուսանցքների հետ պետք է տեղադրվեն սարքավորումներ կամ հարմարանքներ, որոնք հնարավոր կդարձնեն դրանց մաքրումն առանց վտանգի ենթարկելու տվյալ աշխատանքը կատարող կամ ներկա գտնվող անձանց անվտանգությունն ու առողջությունը:

8. Դռները և դարպասները

8.1. Դռների և դարպասների դիրքը, թիվը և չափսերը, ինչպես նաև դրանց պատրաստման համար օգտագործված նյութերը որոշվում են՝ հաշվի առնելով սենյակների կամ տարածքների բնույթն ու օգտագործման նպատակը:

8.2. Թափանցիկ դռների վրա համապատասխանաբար պետք է փակցվեն նշաններ տեսանելի մակարդակի վրա :

8.3. Տարբեր կողմեր բացվող (երկփեղկ) դռներն ու դարպասները պետք է թափանցիկ լինեն կամ թափանցիկ պանելներ ունենան :

8.4. Եթե դռների և դարպասների թափանցիկ կամ կիսաթափանցիկ մակերեսները պատրաստված չեն անվտանգ նյութերից և առկա է վտանգ, որ աշխատողները կարող են մարմնական վնասվածք ստանալ դռան կամ դարպասի կոտրվելուհետևանքով, ապա նշված մակերեսները պետք է համապատասխան պաշտպանվածություն ունենան :

9. Երթևեկության ուղիները

Պայմանավորված աշխատողների պաշտպանությունն ապահովելու նպատակներով սենյակների օգտագործմամբ և սարքավորումներով՝ երթևեկության ուղիները պետք է հստակ նշագրվեն:

10. Հատուկ միջոցառումներ՝ շարժասանդուղքների և շարժվող հատակների համար

Շարժասանդուղքները և շարժվող հատակները պետք է անվտանգ գործեն:

Դրանք պետք է հագեցված լինեն անվտանգության անհրաժեշտ սարքերով:

Դրանք պետք է ունենան հեշտ բացահայտվող և հասանելի տեղում ամրացված վթարային անջատման սարքեր:

11. Սենյակների չափսերը և օդային տարածությունը

Աշխատասենյակները պետք է ունենան բավարար մակերես, բարձրություն, որը, առանց անվտանգությանը, առողջությանը և բարեկեցությանը սպառնացող ռիսկերի, մարդկանց թույլ կտա աշխատել:

Բաժին II. Տարածքի ներսում տեղակայված բացօթյա աշխատակայաններ. 1. Կայունությունը և հուսալիությունը

1.1. Բարձր կամ ցածր շարժական կամ ֆիքսված աշխատակայանները պետք է լինեն ամուր և կայուն՝ հաշվի առնելով՝

- դրանք զբաղեցնող աշխատողների թիվը.
- թույլատրելի աշխատանքային ծանրությունները, որ դրանք կարող են տանել, ինչպես նաև քաշի բաշխումը.
- արտաքին ազդեցությունները, որոնց դրանք կարող են ենթարկվել:

Եթե նշված աշխատատեղերի հենարանները և մյուս բաղադրիչները, ըստ էության, կայուն չեն, ապա դրանց կայունությունը կապահովվի ամրացմանը համապատասխան և անվտանգ մեթոդներով՝ ամբողջ աշխատատեղերի կամ դրանց մի մասի ցանկացած անժամանակ կամ ինքնաբուխ տեղաշարժից խուսափելու համար:

1.2. Ստուգումը

Կայունությունն ու հուսալիությունը պետք է պատշաճորեն ստուգվեն և հատկապես պետք է ստուգվեն աշխատակայանի բարձրությունը կամ խորությունը փոխելու ցանկացած դեպքից հետո:

2. Էլեկտրաբաշխիչ կայանքները

2.1. Տարածքի ներսում տեղակայված էլեկտրաբաշխիչ կայանքները, հատկապես նրանք, որոնք ենթարկվում են դրսի ազդեցությունների, պետք է պարբերաբար ստուգվեն և պահպանվեն:

2.2. Կառուցված հարթակի առջև առկա կայանքները պետք է որոշվեն, ստուգվեն և հստակորեն նշագրվեն:

2.3. Հնարավորության դեպքում, եթե առկա են էլեկտրահաղորդման օդային գծեր, դրանք պետք է հեռացվեն հարթակի տարածքից կամ հոսանքը պետք է անջատվի:

Եթե դա հնարավոր չէ, ապա պետք է լինեն արգելապատնեշներ կամ նախազգուշական նշաններ, որպեսզի տրանսպորտային միջոցները և սարքավորումները դրանցից հեռու պահվեն:

Անհրաժեշտ է ապահովել համապատասխան նախազգուշացումներ և կասեցնող պաշտպանություն, եթե տրանսպորտային միջոցներն ստիպված են անցնելու գծերի տակով:

3. Մթնոլորտային գործոնների ազդեցությունները

Աշխատողները պետք է պաշտպանված լինեն մթնոլորտային գործոնների ազդեցություններից, որոնք կարող են ազդել իրենց առողջության և անվտանգության վրա:

4. Վայր ընկնող առարկաները

Տեխնիկապես հնարավոր լինելու դեպքում աշխատողները պետք է կոլեկտիվ մեթոդներով պաշտպանվեն վայր ընկնող առարկաներից:

Նյութերը և սարքավորումները պետք է այնպես դասավորվեն կամ կոմպլեկտավորվեն, որ կանխվի դրանց քանդվելը կամ շուռ գալը:

Հարկ եղած դեպքում, կողքի վրա պետք է լինեն ծածկված միջանցքներ կամ մուտքը վտանգավոր տարածքներ պետք է բացառվի:

5. Բարձրությունից վայր ընկնելը

5.1. Բարձրությունից վայր ընկնելը պետք է ֆիզիկապես կանխվի, մասնավորապես, ամուր ճոճերի միջոցով, որոնք բավականին բարձր են և առնվազն ունեն սահմանափակող միջադիր, հիմնական և միջանկյալ բազրիք կամ համարժեք այլընտրանքային հարմարություններ:

5.2. Ըստ էության, բարձրության վրա աշխատանքը պետք է իրականացվի միայն համապատասխան սարքավորումներով կամ կոլեկտիվ պաշտպանական սարքերի, այն է՝ ճոճերի, հարթակների կամ անվտանգության ցանցերի օգտագործմամբ:

Եթե աշխատանքի բնույթից ելնելով հնարավոր չէ օգտագործել նման սարքավորումներ, ապա անհրաժեշտ է տրամադրել մուտքի համապատասխան միջոցներ և պետք է կիրառվեն անվտանգության գոտիներ կամ ամրակցման անվտանգության այլ մեթոդներ:

6. Լաստակը և ձեռնասանդուղքները (*)

6.1. Բոլոր լաստակները պետք է պատշաճորեն նախագծեն, կառուցվեն և պահպանվեն, որպեսզի այն պատահաբար չքանդվի կամ չշարժվի:

6.2. Աշխատանքային հարթակները, միջանցքները, կախովի լաստակները և հենասանդուղքները պետք է այնպես կառուցվեն, ունենան այնպիսի չափեր, պաշտպանվեն և օգտագործվեն այնպես, որ դրանց վրայից աշխատողները վայր չընկնեն կամ վայր ընկնող առարկաները չընկնեն նրանց վրա:

6.3. Լաստակը պետք է ստուգվի իրավասու անձի կողմից՝

ա) նախքան դրանց շահագործումը.

բ) հետագայում՝ պարբերաբար.

գ) չօգտագործումից, վատ եղանակային պայմանների ազդեցության կամ սեյսմիկ ցնցումների կամ դրա ամրության կամ կայունության վրա ազդեցություն թողնող ցանկացած այլ իրավիճակի ենթարկվելուց ձևափոխման ցանկացած փուլից հետո:

6.4. Ձեռնասանդուղքները պետք է բավականին ամուր լինեն և ճշտորեն պահպանվեն :

Դրանք պետք է օգտագործվեն ճիշտ, համապատասխան վայրերում և ըստ դրանց նպատակային նշանակության:

6.5. Շարժական լաստակը պետք է պաշտպանվի ինքնաբուխ շարժումներից:

7. Ամբարձիչ սարքավորումները (*)

7.1. Ամբարձիչ բոլոր սարքերը և մյուս հարմարանքները, այդ թվում՝ դրանց բաղադրիչ մասերը, պատկանելիքները, խարիսխները/ամրակները և հենարանները, պետք է.

ա) պատշաճորեն նախագծվեն, կառուցվեն և բավական ամուր լինեն՝ օգտագործման նպատակի համար.

բ) ճշգրիտ կերպով տեղադրվեն և օգտագործվեն.

գ) պահպանվեն սարքին վիճակում.

դ) ստուգվեն և պարբերաբար ենթարկվեն փորձարկումների ու ստուգումների՝ գործող օրենսդրությանը համապատասխան.

ե) շահագործվեն համապատասխան վերապատրաստում անցած որակավորված աշխատողների կողմից:

7.2. Ամբարձիչ բոլոր սարքերի և հարմարանքների վրա պետք է հստակ ցուցադրվի դրանց առավելագույն բեռնատարողությունը:

7.3. Ամբարձիչ բոլոր սարքերն ու հարմարանքները չեն կարող օգտագործվել իրենց նպատակային նշանակությունից բացի այլ նպատակներով:

8. Էքսկավատորները և բեռնող-բեռնաթափող մեքենաներն ու մեխանիզմները (*)

8.1. Բոլոր էքսկավատորները և բեռնող-բեռնաթափող մեքենաներն ու մեխանիզմները պետք է.

ա) պատշաճորեն նախագծվեն և կառուցվեն՝ հնարավորինս հաշվի առնելով էրգոնոմիկայի սկզբունքները.

բ) պահվեն սարքին վիճակում.

գ) ճիշտ օգտագործվեն:

(*) Այս կետը կհստակեցվի 89/655/ԵՏՀ հրահանգը փոփոխող հետագա հրահանգի շրջանակներում, մասնավորապես, դրա հավելվածի 3-րդ կետը լրացնելու նպատակով:

8.2. Էքսկավատորների և բեռնող-բեռնաթափող մեքենաների ու մեխանիզմների վարորդներն ու օպերատորները պետք է հատուկ վերապատրաստում անցնեն :

8.3. Անհրաժեշտ է ձեռնարկել կանխարգելիչ միջոցներ, որպեսզի էքսկավատորները և բեռնող-բեռնաթափող մեքենաներն ու մեխանիզմները չընկնեն փոսի կամ ջրի մեջ:

8.4. Հարկ եղած դեպքում, էքսկավատորների և բեռնող-բեռնաթափող մեքենաների ու մեխանիզմների վրա պետք է տեղադրվեն այնպիսի կառուցվածքներ, որոնք մեխանիզմների շուռ գալու դեպքում դրանց տակ մնալուց և վայր ընկնող առարկաներից պաշտպանում են վարորդին :

9. Սարքերը, մեխանիզմները, սարքավորումները (*)

9.1. Սարքերը, մեխանիզմները և սարքավորումները, այդ թվում՝ ձեռքի մեքենայացված կամ մեխանիկական գործիքները պետք է.

ա) պատշաճորեն նախագծվեն և կառուցվեն՝ հնարավորինս հաշվի առնելով էրգոնոմիկայի սկզբունքները.

բ) պահվեն սարքին վիճակում.

գ) օգտագործվեն միայն նպատակային նշանակությանը համապատասխան.

դ) շահագործվեն համապատասխան վերապատրաստում անցած աշխատողների կողմից:

9.2. Ճնշման տակ աշխատող սարքերը և սարքավորումները պետք է ստուգվեն և, գործող օրենսդրությանը համապատասխան, պարբերաբար փորձարկումներ և ստուգումներ անցնեն :

10. Փորման, հորատման, ստորգետնյա, թունելային և հողային աշխատանքներ

10.1. Անհրաժեշտ է ձեռնարկել նախազգուշական միջոցներ՝ փորման, հորատման, ստորգետնյա կամ թունելային աշխատանքների ժամանակ՝

ա) օգտագործելով անհրաժեշտ հենարան կամ ջրապատնեշ.

բ) մարդու, նյութերի կամ առարկաների ընկնելուց կամ ջրալցումից առաջացող վտանգները կանխելու նպատակով.

գ) բոլոր աշխատակայաններում բավարար օդափոխություն ապահովելու նպատակով, որպեսզի հնարավոր լինի ապահովել շնչելու համար պիտանի մթնոլորտով, որը վտանգավոր կամ վնասակար չէ առողջության համար.

դ) հրդեհի կամ ջրի կամ նյութերի ներհոսքի դեպքում աշխատողներին իրենց անվտանգությունն ապահովելու հնարավորություն տալու նպատակով:

10.2. Նախքան փորման աշխատանքներն սկսելը անհրաժեշտ է ձեռնարկել այնպիսի միջոցներ, որպեսզի պարզվի և նվազագույնի հասցվի ցանկացած վտանգ, որը կարող է առաջանալ ստորգետնյա մալուխների ու բաշխման այլ համակարգերի պատճառով:

10.3. Անհրաժեշտ է անվտանգ մուտք և ելք ապահովել այն վայրում, որտեղ փորման աշխատանքներ են իրականացվում :

10.4. Հողերի, նյութերի կույտերը և շարժվող մեքենաները պետք է հեռու պահվեն փորման աշխատանքների վայրից. հարկ եղած դեպքում անհրաժեշտ է կառուցել համապատասխան արգելապատնեշներ:

11. Քանդման աշխատանքները

Եթե շենքի կամ կառույցի քանդումը կարող է վտանգավոր լինել, ապա

ա) անհրաժեշտ է ընդունել համապատասխան նախազգուշական միջոցներ, մեթոդներ և ընթացակարգեր.

բ) աշխատանքը պետք է պլանավորել և ձեռնարկել միայն իրավասու անձի վերահսկողության ներքո:

12. Մետաղական կամ բետոնե շրջանակները, կաղապարամածները և գործարանային արտադրության ծանր բաղադրիչները

12.1. Մետաղական կամ բետոնե շրջանակները և դրանց բաղկացուցիչ մասերը, կաղապարամածները, գործարանային արտադրության բաղադրիչները կամ ժամանակավոր հենարաններն ու որմահեցերը պետք է տեղակայվեն և ապամոնտաժվեն միայն իրավասու անձի վերահսկողության ներքո:

12.2. Անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան նախազգուշական միջոցներ՝ աշխատողներին կառուցվածքի ժամանակավոր դյուրաբեկունությունից կամ անկայունությունից առաջացող ռիսկերից պաշպանելու համար:

(*) Այս կետը կհստակեցվի 89/655/ԵՏՀ հրահանգը փոփոխող հետագա հրահանգի շրջանակներում, մասնավորապես, դրա հավելվածի 3-րդ կետը լրացնելու նպատակով:

12.3. Կաղապարամածները, ժամանակավոր հենարաններն ու որմահեցերը պետք է նախազգծվեն, տեղադրվեն և պահպանվեն այնպես, որ կարողանան անվտանգ կերպով դիմանալ դրանց վրա դրված ցանկացած ծանրաբեռնվածությանը և ճնշումներին:

13. Ամբարտակները և սուզարկղերը

13.1. Բոլոր ամբարտակները և սուզարկղերը պետք է՝

ա) կառուցված լինեն համապատասխան ամրություն ունեցող համապատասխան, պինդ նյութերից.

բ) հագեցված լինեն համապատասխան սարքավորումներով, որպեսզի աշխատողները կարողանան պատսպարվել ջրի և նյութերի ներհոսքից:

13.2. Ամբարտակների և սուզարկղերի կառուցումը, տեղադրումը, ձևափոխումը կամ ապամոնտաժումը պետք է իրականացվի իրավասու անձի վերահսկողության ներքո:

13.3. Բոլոր ամբարտակները և սուզարկղերը պետք է պարբերաբար ստուգվեն իրավասու անձի կողմից:

14. Աշխատանքը տանիքների վրա

14.1. Եթե անհրաժեշտ է ռիսկը վերացնել կամ եթե բարձրությունը կամ թեքությունը գերազանցում են անդամ պետությունների կողմից սահմանված նորմերը, ապա անհրաժեշտ է կոլեկտիվ կանխարգելիչ միջոցներ ձեռնարկել՝ աշխատողների և գործիքների կամ այլ առարկաների կամ նյութերի վայր ընկնելը կանխելու նպատակով:

14.2. Եթե աշխատողներն ստիպված են աշխատել տանիքի կամ փխրուն նյութերից կառուցված ցանկացած այլ մակերեսի վրա կամ դրա մոտակայքում, որտեղից հնարավոր է վայր ընկել, ապա անհրաժեշտ է կանխարգելիչ միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու համար, որ նրանք անփութությամբ չքայլեն փխրուն նյութերից կառուցված մակերեսի վրա կամ չընկնեն գետնին: